

**Հաստատված է**

**Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի**

**գիտական խորհրդի 2017թ. ապրիլի 8-ի թիվ 23 նիստում**

**ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ \_\_\_\_\_ Ս. Ա. Առաքելյան**

**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ**

**ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ**

1. Սույն կանոնակարգը սահմանում է Երևանի պետական համալսարանի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ) ֆակուլտետի մեթոդական խորհրդի իրավասությունը, ձևավորման և աշխատանքի կազմակերպման կարգը:

2. ԵՊՀ ԻՄ ֆակուլտետի մեթոդական խորհուրդը ֆակուլտետի ղեկանին կից խորհրդակցական մարմին է, որի գործունեության նպատակն է նպաստել ֆակուլտետում տարվող ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանքների պատշաճ իրականացմանը:

3. Ֆակուլտետի մեթոդական խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է ԵՊՀ ԻՄ կանոնադրությանը, ԵՊՀ ԻՄ ֆակուլտետի կանոնադրությանը, ԵՊՀ ԻՄ ներքին իրավական ակտերին և սույն կանոնակարգին համապատասխան:

**2. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

4. Ֆակուլտետի մեթոդական խորհրդի խնդիրներն են՝

- 1) կրթական ծրագրերի, ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի արդիականացումն ու համապատասխանեցումը աշխատաշուկայի պահանջներին,
- 2) ուսումնական գործընթացի կազմակերպմանն, դասավանդման և ուսումնառության մեթոդներին առնչվող հարցերի քննարկումը,
- 3) գիտելիքների ստուգման և գնահատման կիրառվող մոտեցումների քննարկումը,
- 4) պրակտիկաների արդյունավետության բարձրացման մեխանիզմների մշակումը և մշտադիտարկումը,
- 5) ուսումնամեթոդական աշխատանքների երաշխավորումը,
- 6) դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների և ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումների արդյունքների քննարկումը,
- 7) ԵՊՀ ԻՄ ներքին իրավական ակտերով սահմանված և ԵՊՀ ԻՄ հիմնական գործունեության հետ կապված այլ խնդիրների իրականացումը:

### **3. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ**

5. Ֆակուլտետի մեթոդական խորհուրդի կազմում ընդգրկվում են կրթական ծրագրերի ղեկավարները, ֆակուլտետի ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները, որակի ապահովման հանձնաժողովի ֆակուլտետային լիազոր ներկայացուցիչը: Մեթոդական խորհրդի անդամների անվանական կազմը հաստատվում է մասնաճյուղի տնօրենի կողմից՝ երեք տարի ժամկետով:

6. Ֆակուլտետի մեթոդական խորհրդի նախագահին նշանակում է մասնաճյուղի տնօրենը՝ մեթոդական խորհրդի անդամներից:

7. Ֆակուլտետի մեթոդական խորհուրդը հարցերը քննարկում է դեկանի առաջարկով, ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ կամ սեփական նախաձեռնությամբ: Հարցերը քննարկվում են նիստերում, որոնք անցկացվում են աշխատանքային ծրագրին համապատասխան կամ ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ:

8. Ֆակուլտետի մեթոդական խորհրդի նիստերը նախագահի հանձնարարությամբ արձանագրվում են խորհրդի անդամներից մեկի կողմից: Նիստերն իրավագոր են խորհրդի անդամների երկու երրորդի ներկայության դեպքում:

9. Ֆակուլտետի մեթոդական խորհուրդն իր առաջարկությունները կամ եզրակացությունները ներկայացնում է ֆակուլտետի դեկանին, ֆակուլտետի գիտական խորհրդին կամ մասնաճյուղի մեթոդական խորհրդին:

10. Ֆակուլտետի մեթոդական խորհրդի կողմից կազմված փաստաթղթերը և եզրակացությունները հաստատվում են նիստին ներկա գտնվող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում խորհրդի նախագահն ունի վճռորոշ ձայնի իրավունք:

#### **4. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

11. Ֆակուլտետի մեթոդական խորհրդի վերակազմակերպումը կամ լուծարումն իրականացվում է ԵՊՀ ԻՄ կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

12. Սույն կանոնակարգի մեջ փոփոխություններն ու լրացումները կատարվում են ԵՊՀ ԻՄ կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով: